Գ.

Բալախոռ եւ Սիւնուր դաշտ:

Բայբուրդից սկսած ճորոխը թեքւում է դէպի հիւսիս արեւմուտք, մինչեւ Բալախոռի վտակի խառնունքը: Բալախոռի աւանը ՃԱ-ի ամենա-արեւմտեան-հարաւային ծայրն է կազմում, շրջապատուած է հարաւից Սղբրջակ[1], Օթլուկ, Ակբունդար, Կարաղաշ, Զորոզմա, Վավուկ եւ Զիարէթ լեռներով, որոնք Եփրատ եւ Կալկիթ գետերի եւ Բալախոռի վտակի ջրբաժան գիծերն են կազմում:

Բալախոռ վտակը բազմաթիւ առուակներից է կազմուած, որոնք ոռոգում են ամբողջ աւազանը: Արեւելեան-հարաւի կողմից Ակ-բաբա լեռներից դէպի հիւսիս է իջնում Վարչին առուակը, որը ոռոգում է մեծ եւ փոքր Կշլակ, Բեռնա, Կալիսկավար, Վարիժնա, Տանիշման, Վարզական, Հնձաւերակ գեղերի հանդերը, ապա միանում է Հինդի առուին: Ակխովի լեռներից բղխում է եւ դէպի հիւսիս ուղղուում Հինդի առուակը Վարչին առուի հետ զուգընթացաբար եւ ոռոգում է Մագերա, Խոխո, Ջիւջուգէ, Դիւտեր, Խաշիէ, Բելեվերիկ, Հինդի, Հինդիխան, Սինկարոս, Կուշկուրի, Ջենխինիս

---

1 Սղրջակ լեռները կոչւում են նոյնպէս Քրքլար (քառասուն դից օթեւան) եւ պաշտւում են բնիկներից, որոնց Քրիստափորի վանքը (Կոփէս առ-ի ափին) մի ժամանակ հեթանոսական տաճար է եղել Քառասնից նուիրուած: